ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1950 *Общественные науки*

ԼՐԱՏՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ ՄԵԾ ԴՐԱՄԱՏՈՒՐԳ Գ. ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 125-ԱԱՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ

1950 թ. հուլիսի 7-ին և 8-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի գիտական սեսիան՝ նվիրված հայ մեծ դրամատուրգ Գ. Սունդուկյանի ծննդյան 125-ամյա հոբելյանին։

Հուլիսի 7-ի նիստում բացման խոսքով հանդես եկավ Գրականության Ինստիտուտի դիրեկտոր պրոֆ. Ս. Մկրյանը, որից հետո սեսիան լսեց հետևյալ զեկուցումները.

«Սունդուկյանի ստեղծագործությունը» (զեկուցող ֆիլ. գիտությունների թեկնածու Ս. Բազյան, «Սունդուկյանը վրացական բեմի վրա» (զեկ. Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ, Ստալինյան մրցանակի լաուրեատ Ի. Գրիշաշվիլի)։

Հուլիսի 8-ի նիստում զեկուցեցին ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ռ. Հովնանը «Սունդուկյանը և ռուսական կուլտուրան» թեմայով և ֆիլ. գիտությունների թեկնածու Ռ. Զարյանը «Սունդուկյանը և հայ թատրոնը» թեմայով։